

ՂԿՂՈՅՄԱԿՈՒՆ ԴԿՈՒՄՈՒ ՏՎԵԳՆՈՒԿԱԿԱԿՄԸ ԿԻՅԱԿԱԿՄԸ ԿՂՈՒՄԻՆՈՒԳՐԱԿՄ ԴԳՆՏԳՆԱԿԱԿՄ ԴԳՆՏԳՆԱԿԱԿՄ ԴԳՆՏԳՆԱԿԱԿՄ ԴԳՆՏԳՆԱԿԱԿՄ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՊԱՏՎՈԳԻՐ ՆԱԶՆԵՅ ՄԱՔՍԻՄ ՆԱԿՈՒՅԱՆԻՆ

Օգոստոսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը, հանուն «Մաբենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի, պարվոզիբ հանձնեց Քաջարանի Պղնձամուխրդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանին:

Հանդիսավոր արարողության ընթացքում Մաշտոցի անվան Մաբենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը ներկայացրեց «Մաբենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի առաքելությունը: Մաբենադարանի տնօրենն անդրադարձավ Մաբենադարանի աշխատանքներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աջակցությանը՝ նշելով, որ «Նորին Սըրբության օրինակին հեղևում են նաև նվիրյալ հայորդիները, որոնց մեջ է փյաբ Մաքսիմ Հակոբյանը, որն իր ներդրումով մեծապես նպաստել է Մաբենադարանի ծրագրերի իրականացմանը, ձեռագրերի ձեռքբերմանը և շենքի բարեկարգմանը»:

Բարձր գնահատելով բարերարի ազգաշեն և եկեղեցանպաստ գործունեությունը՝ Վեհափառ հայրապետն իր օրհնության խոսքում նշեց. «Մեզ համար հոգևոր փաճարի խորհուրդ ունի Մաբենադարանը, ուր պահվում են մեր հայրերի աղոթքներով սրբեղծված մարյաններն ու հոգևոր արժեքները: ...Մաբենադարանը հարստությունն է ազգի: Յուրաքանչյուր ներդրում Մաբենադարանի առաքելության մեջ, նրա գիտական աշխատանքների զարգացման գործում, նշանակում է մասնակցություն ունենալ ազգային կյանքի կերպմանը»:

Տիար Հակոբյանը դեռևս 2002 թ. հոկտեմբերին իր եկեղեցաշեն գործունեության համար արժանացել էր հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պարվո շքանշանին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության և Մաբենադարանի պաշտոնատեսանքները:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ*